

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՔԱԶԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

Օ Ր Ա Գ Ի Ր

ՔԱԶԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ

ՔԱԶԱՐԱՆ- 2012

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2013թ ծրագիրը» կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի(այսուհետ՝Օրենք) և «Տեղական ինքնակառավարվող մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 29.09.2002թ թիվ 1544-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Մույն ծրագիրը 2008 թ ՄԱԿ Ջարգացման Ծրագրի հետ համատեղ Քաջարան քաղաքի համար մշակված «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողություններ» համընդգրկուն և ամբողջական ծրագրային պաստաթղթի բաղկացուցիչ մասն է և հանդիսանում է նախատեսված գործողությունների իրականացման չորրորդ փուլը:

Ծրագիրը ընդգրկում է նաև Քաջարան քաղաքի կապիտալ զարգացման քառամյա ծրագրի միջոցառումները:

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք.

ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ՝ «Համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում» հոդվածով և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով ;

առաջնորդվելով 2007թ ՄԱԿ Ջարգացման Ծրագրի հետ համատեղ Քաջարան քաղաքի համար մշակված «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողություններ » ծրագրի դրույթներով,

առաջնորդվելով Քաջարան քաղաքի կապիտալ զարգացման ծրագրի դրույթներով,

հաշվի առնելով բնապահպանական միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցության հնարավորությունները,մասնավորապես՝Էկոլոգիական կրթության զարգացման և կենսաբազմազանության պահպանության բնագավառում,

համոզված լինելով, որ հնարավոր չէ համայնքի կայուն զարգացումը առանց բնապահպանական քաղաքիչի,

համոզված լինելով, որ համայնքի առջև ծառայած խնդիրների լուծման գործում հասարակության ակտիվ մասնակցությունը կարևոր ու անհրաժեշտ պայման է,

գիտակցելով էկոլոգիական կրթության կարևորությունը բնապահպանական վարքագծի և աշակերտների էկոլոգիական մտածողության ձևավորման գործում,

մտահոգ լինելով քաղաքի կանաչ գոտիների սակավության խնդրով,

կարևորելով բնապահպանական ծրագրերի շարունակական,ամբողջական և փոխկապակցված լինելը,

տեղյակ լինելով «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների» և «Շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների» ազգային ծրագրերի դրույթներին և բնապահպանության բնագավառում ՀՀ ունեցած միջազգային պարտավորություններին:

ՔԱՋԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՍՓԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

ԾՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱՆԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ



